«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ

Վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման խնդիրը դպրոցում

Կատարող՝ Եղիկյան Մարիետա Մարատի

Առարկա- Հասարակագիտություն

Դպրոց՝ Գյումրու 26 ավագ դպրոց,

Ղեկավար՝ Ալեքսանյան Կարինե

Գյումրի 2023թ.

Բովանդակություն

Ներածություն----------1

Գլուխ 1. Ի՞նչ է մասնագիտական կողմնորոշումը և ինչպե՞ս ճիշտ մասնագիտություն ընտրել----------3

Գլուխ 2.Ուսուցչի դերը սովորողի մասնագիտական կողմնորոշման գործընթացում----------10

Եզրակացություն----------

Գրականության ցանկ----------

Ներածություն

Մեր երկրում հասարակական, տնտեսական,քաղաքական և մշակութային կյանքում տեղի ունեցող փոփոխությունների պայմաններում այսօր անհրաժեշտություն է դարձել սովորեղներին առավել ճիշտ և կազմակերպված ձևով նախապատրաստել հասարակական լիարժեք կյանքին: Պետք է իրականացնել արդյունավետ աշխատանքային գործունեություն և օգնել ավագ դպրոցի սովորողներին կատարել ճիշտ,հիմնավորված ու արդյունավետ ընտրություն: Փորձը ցույց է տալիս, որ շատ հաճախ այսօր ավագ դպրոցի սովորողին փորձում են ապակողմնորոշել դուրս գալով իրենց շահերից: Շատ կարևոր է մասնագիտական կողմնորոշման ժամանակ հաշվի առնել սովորողի մասնագիտական կարողությունները ու նրա գիտելիքների շրջանակը: Ավագ դպրոցականներ շրջանում ինտենսիվորեն զարգանում է բարոյական ուժերը, ձևավորվում է նրա հոգեկան կերպարը,որոշակի են դառնում բնավորության գծերը, ձևավորվում է աշխարհայացքը: Ներկայումս ազատ տնտեսական հարաբերություններով պայմանավորված մասնագիտության գիտակցված ընտրությունը դառնում է ավելի արդիական ու հրատապ:Նորագույն տեխնոլոգիաների, կրթության և աշխատանքի նոր շուկաների զարգացման պայմաններում շատ մասնագիտությունների և զբաղմունքների ներկայացվում են նոր պահանջներ, ծնվում են նոր մասնագիտություններ, որոնց մասին սովորողներն ու նրանց ծնողներն անգամ պատկերացում չունեն: Բացի անբավարար տեղեկատվությունից, կարևոր է նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների նախասիրությունների և անձնային որակների բացահայտումն ու զարգացումը, և նախընտրած մասնագիտության համադրումը աշխատաշուկայի ներկա և կանխատեսվող պահանջարկի հետ: Մասնագիտության ընտրությունից հետո հաջորդ կարևոր խնդիրը մասնագիտական ուսումնական հաստատության ընտրությունն է:

Հետազոտության նպատակը՝

-իրազեկել աշակերտներին աշխատաշուկայում պահանջարկ ունեցող և զարգացող մասնագիտությունների մասին,

-նպաստել աշխարհայացքի ընդլայմանը,

-վեր հանել աշակերտի հնարավորությունները ու նախասիրությունները,հաշվի առնելով նրա անհատական,հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները և առողջական վիճակը գտնել համապատասխան մասնագիտություն,

-օգնել պրակտիկորեն ուսումնասիրել հետաքրքրող մասնագիտությունը:

Հետազոտության խնդիրը՝

-ձևավորել աշխատանքի և մասնագիտությունների վերաբերյալ դրական վերաբերմունք,

-նպաստել կարիերայի պլանավորման և ձեռնարկատիրական գործունեության միջոցով ինքնազբաղվածության ապահովմանն ուղղված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը,

-վերլուծել ու առանձնացնել այն գաղափարները,որոնք նպաստում են սովորեղի մասնագիտական կողմնոոշմանը,

-բացահայտել և հիմնավորել մասնագիտական կողմնորոշման գործընթացում դպրոց-ընտանք կապի կարևորությունը,

Հետազոռության օբյեկտը՝սովորողների մասնագիտական կողմնորոշման գործընթացը ավագ դպրոցում:

Հետազոտության առարկան՝ժամանակակից դպրոցում ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման գործընթացի իրականացումը:

Հետազոտության մեթոդ- Աշխատանքում որպես մեթոդական հիմք հիմնականում օգտագործվել են նկարագրական, համեմատական, դիտման,զրույցի,հարց ու պատասխանի,խմբային աշխատանքի,էքսկուրսիաների մեթոդները:

Գլուխ առաջին : Ի՞նչ է մասնագիտական կողմնորոշումը և ինչպե՞ս ճիշտ մասնագիտություն ընտրել

Մասնագիտական կողմնորոշում կրթական ծրագրի հիմնական նպատակը սովորողների մասնագիտության գիտակցված ընտրությանն ու ինքնորոշմանը նպաստելն է՝ անձի հետաքրքրություններին, կարիքներին և առանձնահատկություններին, ինչպես նաև աշխատաշուկայում մրցունակ ապագա աշխատուժի պահանջարկին առավելապես համապատասխանող մասնագիտական գործունեության ազատ և գիտակից ընտրության հնարավորության ստեղծմամբ: Հանրակրթության ոլորտը կարգավորող նորմատիվ ակտերի պահանջների և կրթության բովանդակության կառուցվածքի համաձայն՝ 12-ամյա հանրակրթական դպրոցում մասնագիտական կողմնորոշումը դիտարկվում է որպես գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական, հոգեբանամանկավարժական, բժշկաֆիզիոլոգիական գործընթաց, որը կոչված է նպաստելու սովորողի անձի կողմից մասնագիտության գիտակցված ընտրությանը և կարիերայի պլանավորմանը՝ բացահայտելով և զարգացնելով վերջիններիս անհատական հոգեբանական առանձնահատկությունները, հետաքրքրություններն ու հակումները, ապահովելու նրանց անձնային աճը, ինչպես նաև ձևավորել աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք շուկայական հարաբերությունների պայմաններում:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, մի շարք երկրներում հանրակրթական ուսումնական հաստատություններում հատկացված են մասնագիտական կողմնորոշման ծառայությունների իրականացման հարմարավետ սենյակներ (կողմնորոշման կամ տեղեկատվական սենյակ)՝ համալրված անհրաժեշտ բոլոր ռեսուրսներով,սարքավորումներով: Կողմնորոշման սենյակի այցելուների մուտքն ապահովելունպատակով ընտրվում է պատասխանատու անձ, ով անհրաժեշտության դեպքում նաևնրանց ուղղորդում է: Գրասենյակի աշխատանքները համակարգվում են շաբաթականնախատեսված աշխատանքային գրաֆիկով: Յուրաքանչյուր մասնագետ համապատասխան մեթոդաբանությամբ և նախատեսված ժամկետներում իրականացնում է իր գործառույթները, որի մասին նաև գրառումներ է կատարում՝

հաջորդ մասնագետներին փոխանցելու նպատակով: Գրասենյակը տալիս է նաև ինքնասպասարկման հնարավորություն և իր բոլոր հարմարություններով նախատեսված է ինչպես աշակերտների, այնպես էլ ծնողների և մասնագետների համար:

Մասնագիտական ընտրության շեմին կանգնած մարդիկ տարբերվում են շրջապատող աշխարհի պահանջներին համապատասխան իրենց հնարավորությունները գնահատելու և իրենց ճանաչելու ձգտմամբ:

Մասնագիտական ինքնագիտակցության զարգացման հարցում առավել զգայունակ են հատկապես ավագ դպրոցականները:Սակայն մասնագիտության ընտրությունը մասնագիտական կայացման բարդ, երկարատև, շարժական ու հակասական գործընթացի միայն սկիզբն է: Այդ գործընթացում Տ. Վ. Կուդրյավցևն առանձնացնում է չորս շրջան.

1. Մասնագիտական մտադրությունների ծագում և ձևավորում: Դրա հաջող իրականացման հոգեբանական չափորոշիչը՝ աշխատաշուկայի, հասարակական պահանջմունքների և անձի մասնագիտական պահանջմունքների միջև համապատասխանություն գտնելն է:

2. Մասնագիտական կրթություն և դաստիարակություն: Սրա հաջողության հոգեբանական չափորոշիչը անձի մասնագիտական ինքնորոշումն է, այսինքն՝ իր հանդեպ վերաբերմունքի ձևավորումը՝որպես ընտրված մասնագիտության ու մասնագիտական ուղղվածության սուբյեկտի:

3. Ակտիվ ներխուժում մասնագիտական միջավայր և մասնագիտական պարտականությունների կատարում: Սրա իրականացման հաջողության հոգեբանական չափորոշիչը մասնագիտության ակտիվ տիրապետումն է իրական աշխատանքային գործընթացի ուարտադրական հարաբերությունների պայմաններում և իրեն գտնելը աշխատանքային կոլեկտիվների համակարգում:

4. Անձի հնարավորությունների և մասնագիտական ձգտումների իրականացում ինքնուրույն աշխատանքում (լրիվ կամ մասնակի):

Մասնագիտության ընտրության վրա ազդող գործոններն են՝

● Մասնագիտության մասին գիտելիքներն ու դրա պահանջարկը

● Հակումները (հետաքրքրություններ, ջանքեր)

● Ընդունակություններ, առողջություն (ներքին հնարավորություններն ու սահմանափակումները)

● Պահաջների և ինքնագնահատման մակարդակը

● Ծնողների, ընտանիքի կարծիքը

● Հասակակիցների կարծիքը

● Ուսուցիչների, մասնագետների դիրքորոշումները

● Անհատական մասնագիտական պլան

Ի՞նչ է նշանակում մասնագիտության հիմնավորված ընտրություն և սխալ ընտրություն: Մասնագիտության ճիշտ և հիմնավորված ընտրությունը ենթադրում է ծայրահեղ դեպքում չորս գործոնների հաշվառում.

● անհատական առանձնահատկությունների,

● աշխատաշուկայի իրադրության (կոնյունկտուրա), այսինքն՝ ինչ մասնագիտություններ են պահանջված ներկա պահին,

● ընտրվող մասնագիտության և ուսումնական հաստատությանմասին տեղեկացվածության,

● ենթադրվող ընտրության վերաբերյալ շրջապատողների (ծնողների, ուսուցիչների, ընկերների և այլոց) կարծիքի:

Իր հերթին, մասնագիտության սխալ ընտրությունը հաճախակի կապված է հետևյալ կողմնորոշումների հետ.

● որևէ բանով (օրինակ, նկարչությամբ) տարվածությունն ընտրության պահին,

● երբեմն խմբերով մեկ բուհ ընդունվող հասակակիցների ընկերակցությունը,

● ծնողների և ընկերների կտրական կարծիքը, ընտրված մասնագիտության անփոփոխությունը և դրան նվիրվածությունը,

● մասնագիտությունը մարմնավորող մարդը, բայց ոչ հենց մասնագիտությունը: Առաջադիմող մասնագետը սովորաբար բարձրանալ սկսում է ցածր աստիճաններից

● ենթադրվող (և ոչ իրական) անձնային ու մասնագիտական կարևոր որակները, այսինքն՝ սեփական ֆիզիկական ու հոգեկան առանձնահատկությունների և թերությունների չիմացությունը կամ թերագնահատումը:

Կրթական համակարգում ապագա մասնագետների կայացման համար կարևոր դեր են խաղում մասնագիտության մեջ ինքնորոշումը, մասնագետների և աշխատաշուկայի պահանջարկի համապատասխանությունը, ինչին հնարավոր է հասնել հոգեբանամանկավարժական աջակցմամբ և ուղղորդմամբ: Եթե մինչ այժմ ուսումնառության մեջ մեզ հասած ժառանգությունը իմաստավորվել է մասնագիտական կողմնորոշման ճանապարհով, այն եղել է արդարացված, քանզի ապագա մասնագետները աշխատանքի են ուղղորդվել ըստ ստացված որակավորման:

Փոփոխվող հասարակության պայմաններում այն չունի արդյունավետություն, քանի որ ապագա մասնագետները (դեռահասներ, պատանիներ, երիտասարդներ) կրթությունը ստանալուց հետո աշխատանքի ընտրությունը կատարում են ինքնուրույն կողմնորոշվելով, ելնելով պահանջարկից: Այսինքն, այսօր առավել կարևոր է ապագա մասնագիտության համար ինքնորոշումը սեփական անձի հնարավորությունների և կարողությունների գիտակցման ճանապարհով, ոչ թե մասնագիտական կողմնորոշում՝դրանց գնահատման միջոցով: Այս առումով կարևորում ենք հոգեբանական աջակցումն ու խթանումը ավելի վաղ՝ դեռահասության տարիքում, ինչը հնարավոր է իրականացնել համապատասխան տեղեկատվության լայնածավալ կիրառմամբ և դեռահասների շրջանում հոգեբանական ինքնաճանաչման, ինքնագիտակցման ձևավորման և զարգացման ճանապարհով: Սովորողի մասնագիտական ինքնորոշմանըկարելի է մոտենալ որոշակի հիերարխիայով. մանկական տարիքի խաղային գործունեության առանձնահատկություններից՝ թե ուր են ուղղված եղել հետաքրքրությունները (ինչպիսի դերեր, հերոսներ, կերպարներ և այլ), մինչև հասուն տարիքում՝ ընդունակություններով պայմանավորված՝ մասնագիտության ընտրություն և իրացում: Հիերարխիայի յուրաքանչյուր շերտ «պատասխանատու է» տարիքային այս կամ այն փուլի համար: Այսպես. դեռահասի պատկերացումներն ու երազանքները որոշակի համակրանք, կամ նույնիսկ հրապուրաքն են ձևավորում կոնկրետ մասնագիտության հանդեպ, իսկ արդեն պատանեկան տարիքում դրանք նախահիմք են դառնում արժեհամակարգի համար: Ապագա մասնագետը կայացնում է իր

որոշումը,ընտրում է մասնագիտությունն ու ծավալում սկզբում ուսումնական, այնուհետև մասնագիտական գործունեությունը:

Հանրակրթական հաստատություններն այսօր նոր պահանջներ են առաջացնում ապագա երիտասարդների համար: Դրանցից ամենակարևորներից է մասնագիտական կոմպետենտության, որպես իրազեկվածության, ապահովումը: Ավագ դպրոցականների և երիտասարդների մոտ մասնագիտական կոմպետենտությունը կարող է նպաստել ապագա մասնագիտության ընտրության հնարավորությունների ընդլայնմանը, արդյունավետ ինքնորոշմանը:

Մասնագիտական ինքնորոշումը ապահովում է որոշակի պատրաստվածություն ապագա մասնագիտության ընտրության համար: Ելնելով այն հանգամանքից, որ կրթական հաստատությունը պետք է ապահովի ոչ միայն գիտելիքներով, այլև այս կամ այն երևույթի մասին գործնականում ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձառությամբ, անհրաժեշտ է ուսումնառության ընթացքում հաշվի առնել սովորողների՝ որպես ապագա մասնագետների, կոմպետենցիաների ձևավորման գործընթացը ևս: Կոմպետենցիաները, որպես անձի գիտելիքների, կարողությունների,հմտությունների, գործունեության ձևերի փոխկապակցված համախումբ, ձևավորվում են ուսումնական գործընթացներում, տարբեր առարկաների տիրապետման շնորհիվ և ծառայում են ապագա արդյունավետ գործունեության իրականացմանը:

Համապատասխան կոմպետենցիաներին տիրապետելը և գործունեության հանդեպ ձևավորված հստակ պատկերացումներն ու վերաբերմունքը ապահովում են

մասնագիտական կոմպետենտությունը երիտասարդ տարիքում: Մեր կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում դուրս են բերվել մասնագիտական

կոմպետենտության բաղադրիչները: Առանձնակի կարևորվել են մասնագիտական

կոմպետենտության և ինքնիրացման էական նշանակությունները, համադրություններն

ու տարբերությունները: Կոմպետենտության տեսանկյունից կարևորվել է

• համապատասխան գիտելիքի տիրապետումը,

• մասնագիտական նույնականացումը,

• նպատակի և դրան հասնելու միջոցների հստակությունը,

• պարտականության գիտակցումը,

• գործին ուղղված պատասխանատվության զգացումը,

• մասնագիտական գործունեության մեջ հնարավոր խնդրի կանխատեսումը,

• անձնային և մասնագիտական որակների փոխլրացումն ու համադրումը,

• աշխատանքի արդյունքի կարևորումն ու պահանջարկը…

Կոմպետենտության համար կարևորվում է նպատակների հստակությունն ու հաստատությունը, իսկ մանսագիտական ինքնիրացման համար՝ ճկունությունն ու նպատակների բազմազանությունը: Երբ դիտարկում ենք կոմպետենտությունն ու ինքնիրացումը ինքնուրույնության տեսանկյունից, ապա նույնպես հանգում ենք հակադրության. Կոմպետենտությունը չի պարտադրում ինքնուրույնություն, նույնիսկ սահմանափակում է այն, իսկ ինքնիրացման համար ինքնուրույնության ցուցանիշները կարող են միայն համալրվել ու նորովի զարգանալ: Ինքնուրույնության համարանհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքինազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկիհամապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն…

Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորելիհամապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբերփուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում: Մանկության տարիներինազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրաընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար: Ավելի ուշ, դպրոցական տարիքում առավել կարևորվում է գիտելիքը, իմացությունը, ինչը թելադրվում է մեծի կողմից, և այս առումով ինքնուրույնության խթանումը զուգահեռ դժվար է իրականացնել: Սեփական անձի հետաքրքրությունների և ապագա մասնագիտության սկզբնական ինքնորոշման քայլերը կարող են իրականանալ վաղ դեռահասության տարիքում:Եթե տեղեկացվածությունը, մասնագիտությունների մասին պատկերացումները բավարար լինեն ինքնորոշման համար, ապա ուսումնական հաստատություններում սովորողները կարող են ինքնուրույն կողմնորոշվել սպասվող հոսքային ընտրության համար, այսինքն կայացնել որոշում՝ որպես ապագա մասնագետ:

Ուսուցչի դերը կարիերայի ուղղորդման մեջ միշտ մնում է առանցքային: Ոիսուցիչը այն անձն է, ով կարողանում է ուղղորդել աշակերտին, օգնել նրան կողմնորոշվել այսօրվա տեղեկատվական հոսքի մեջ և ընդգծել անձամբ իր համար ամենաօգտակարն ու արդիականը:Կարևոր է, որ ուսուցիչը փորձի օգնել

երեխաներին մասնագիտական ինքնորոշմանհարցում: Օրինակ՝ նա պահում էր կարիերայի ուղղորդման օրացույց, որտեղ նշում էր այս ոլորտի բոլոր կարևոր իրադարձությունները՝ համալսարանի բաց օրեր, պրակտիկա և պրակտիկա դպրոցականների համար:

Բուհերն իրենց կայքերում նախապես տեղեկացնում են բաց օրերի մասին, հաճախ հայտարարություններ են լինում ամառային դպրոցների և պրակտիկայի մասնակիցների հավաքագրման մասին: : Սա ուսումնական ինտենսիվ է 9-10-րդ դասարանների աշակերտների համար, ովքեր կկարողանան իրենց զգալ ապագայի մասնագետներ, ծանոթանալ տեխնիկական նոր զարգացումներին: Ծրագիրը ներառում է վարպետության դասեր, դասախոսություններ, գործնական պարապմունքներ,էքսկուրսիաներ և թրեյնինգներ, ինչպես նաև գիտաժողով, որտեղ լավագույն թիմերը կներկայացնեն իրենց նախագծերը: Արձակուրդների ընթացքում հանրապետության բուհերում կանցկացվեն ամառային դպրոցներ և դպրոցականների կարիերայի ուղղորդման փառատոներ,էքսկուրսիաներ:

Մինչ ուսումն ավարտելը սովորողները կարող են իրենց փորձել մի քանի մասնագիտություններում: Սա կօգնի նրանց ճիշտ ընտրություն կատարել: Ի՞նչ դեր կարող է ունենալ ուսուցիչը այս դեպքում: Օրինակ՝ կազմակերպել էքսկուրսիա դեպի արդյունաբերական ձեռնարկություն կամ ստեղծագործական ստուդիա, որտեղ սովորողները կարող են տեսնել, թե ինչպես են աշխատում մասնագետները: Սովորողների ներգրավվածությունը մեծացնելու համար կարող ենք նրանց համար առաջադրանք պատրաստել. ինքնուրույն պարզել ընկերության աշխատակիցներից, թեինչ պաշտոններ կան ձեռնարկությունում, և այս մասին տեսանյութ կամ ներկայացում պատրաստեք էքսկուրսիայի դաշտում:

Մասնագիտության մեջ ընկղմվելու մեկ այլ ձև պրակտիկան է: Սա իրական խնդիրներիվրա աշխատելու հնարավորություն է: Պրակտիկայի ավարտից հետո տղաներըկկարողանան օգտակար շփումներ հաստատել և ռեզյումեում տող ստանալ:Այսձևաչափն ավելի հարմար է ավագ դպրոցի աշակերտների համար 14 տարեկանից(օրենքով), ավելի երիտասարդները կարող են գնալ կարիերայի ուղղորդման ճամբար:

Մասնագիտություն ընտրելու կարևոր ձևերից են վարպետության դասերը, որոնց ընթացքում փորձագետը սովորողներին կծանոթացնի մասնագիտությանը, կկիսվի աշխատանքային խնդիրները լուծելու հնարքներով և կպատմի, թե սովորողներինինչ լրացուցիչհմտություններ պետք կգան:

Վարպետության դասի ձևաչափով ավելի հեշտ կլինիկենտրոնանալ հենց մասնագիտության վրա, այլ ոչ թե ընկերության վրա որպես ամբողջություն:

Գլուխ երկրորդ: Ուսուցչի դերը սովորողի մասնագիտական կողմնորոշման գործընթացում

Մանկավարժը այն մասնագետն է, որը դաստիարակչական աշխատանքներ է կազմակերպումերեխաների, երիտասարդների և մեծահասակների հետ սոցմշակութային տարբեր պայմաններում(ընտանիք, ուսումնական հաստատություն, նախադպրոցական հաստատություն, մանկապարտեզ,մանկատուն, աշխատանքային կոլեկտիվ, օժանդակ կրթության հաստատություն և այլն): Մանկավարժիպրակտիկ գործունեության խնդիրների շրջանակը շատ լայն ոլորտներ է ընդգրկում՝ սկսած երեխաների հետ անմիջական աշխատանքից, որոնք ունեն սոցիալականացման հետ կապված խնդիրներ, մինչև համագործակցումը սոցիալական կազմակերպությունների, սոցիալական ինստիտուտների հետ, որոնքմասնակցում են աճող սերնդի սոցիալական դաստիարակությանը: Սրանով էլ պայմանավորված էմանկավարժի բազմաթիվ մասնագիտացումների առկայությունը:Մանկավարժի խնդիրն է ուղղորդել և կառավարել անձի սոցիալականացման գործընթացը, որը ընթանում է տարբեր սոցիալական գործոնների և սոցիալական ինստիտուտների ազդեցությամբ:Սոցիալականացումը անհատի կողմից սոցիալական միջավայր ներգրավվելու երկարատև, անընդհատ և հակասական պրոցեսն է: Այն ենթադրում է գիտելիքների, պրակտիկ կարողությունների յուրացում, հարմարում հասարակության արժեքային համակարգին: Սոցիալականացման ընթացքում ձևավորվող անձնավորությունը յուրացնում է սոցիալական դերեր, կուտակում է կյանքի փորձ, ձեռք է բերում կայուն վարգագիծ.

Մեր աշխատանքի սահմաններում ուսումնասիրվում է մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները դպրոցականների հետ, որոնց սոցիալականացման հիմնական ասպեկտներն են.

▪ ուսման և իր հետագա կրթության նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը;

▪ կենսական պլանների գիտակցված ձևավորվում և մասնագիտական ինքնորոշման անհրաժեշտության գիտակցումը;

▪ կենսական արժեքների համակարգի վերամշակումը

▪ մարդկանց հետ համագործակցության և փոխազդեցության դրական փորձի կուտակումը:

▪ քաղաքացիական դիրքորոշման, երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացների նկատմամբ գիտակցված վերաբերմունքի ձևավորումը:

Սրանք սերտորեն կապված են և փոխազդում են միմյանց հետ: Մանկավարժը մասնագիտական կողմնորոշման ծրագրերի միջոցով իր ներդրումն է ունենում դպրոցականների սոցիալականացման մեջ:Մասնագիտության ընտրությունը սոցիալականացման որոշակի փուլում հանդես է գալիս որպեսվերջինիս նորմալ ընթացքն ապահովող հանգամանք: Ավագ դպրոցականների հետ մանկավարժի կողմից իրականցվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետությունը որոշվում է բազմաթիվ գործոններով, այդ թվում նաև նրա տեղեկացվածությամբ:

Մասնագիտական կողմնորոշման ոլորտում մանկավարժի տեղեկացվածության հիմնական բաղադրամասերն են. մասնագիտությունների դասակարգաման, աշխատանքի բովանդակության,մասնագիտության կողմից մարդուն ներկայացվող պահանջների մասին տեղեկությունների տիրապետումը, մասնագիտական կրթության ձեռքբերման ուղիները, ուսումնական կենտրոնների, միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների,ընդունելության պայմանների մասին տեղեկությունների տիրապետումը,ընդունելության կանոնների, մրցույթների, ցուցանիշների մասին տեղեկացվածությունը, աշխատաշուկայի առանձնահատկությունների իմացություն (ներկայումս ի՞նչմասնագիտություններ են պահանջված, հետագայում ո՞ր մասնագիտությունները ավելի մեծ

պահանջարկկունենան),մանկական, դեռահասության, պատանեկան տարիքի առանձնահատկություններիիմացություն և այդ գիտելիքների գրագետ կիրառում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ կազմակերպելիս:

Հաջող գործունեության իրականացման պայման է մանկավարժների և հոգեբանների համագործակցությունը: Պետք է հստակորեն առանձնացնել յուրաքանչյուրի գործառույթները, ինչը հնարավորություն կտա ավելի գրագետ կազմակերպել մասնագիտական կողմնորոշման աշխատանքները:Այնումենայնիվ աշխատանքը արդյունավետ կլինի միայն այն դեպքում, երբ բոլոր մասնագետներն աշխատեն միահամուռ կերպով: Մանկավարժի և հոգեբանի խնդիրն է միավորել և համակարգել բոլոր մանկավարժների, ընտանիքի, այլ շահագրգռված անձանց (այս կամ այն մասնագիտության ներկայացուցիչ), կազմակերպությունների ներուժը:

Հանրակրթական դպրոցում մասնագիտական կողմնորոշում իրականացնող մանկավարժի կարևորագույն խնդիրներից է մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բացումը, որոնց միջոցով էլ նա իրականացնում է իր մասնագիտական կողմնորոշման աշխատանքները: Կենտրոնի հիմնական խնդիրն է աշակերտներին անձնային զարգացման, ճիշտ սոցիալականացման, մասնագիտական կայացման և կենսական դիրքորոշման հարցում օգնություն տրամադրումը: Մանկավարժի աշխատանքը այս ոլորտում ևս շատ ընդգրկուն է՝ սկսած տարածքային սոցիալ-մանկավարժական ծրագրեր իրականացնելուց մինչև առանձին երեխային օգնության տրամադրում կապված նրա իրավունքների և հետաքրքրությունների պաշտպանության հետ:Մասնագիտական կողմնորոշման գործընթացը մանկավարժական գրականության մեջ դիտարկվում է որպես անհատի մասնագիտական ինքնորոշման գիտական կառավարում և մասնագիտական գործունեության ընտրության դրդապատճառներ: Մասնագիտության ընտրության կողմնորոշումը ներառում է անձի համապարփակ հոգեբանական և մանկավարժական ախտորոշման իրականացում, նրա բազմակողմանի մասնագիտական իրազեկման և մասնագիտական կողմնորոշման ձևավորում: Հոգեբանական և մանկավարժական հետազոտություններն ապացուցել են, որ մասնագիտության կողմնորոշման մեջ հատկապես կարևոր է դպրոցական տարիքը, որի ընթացքում դրվում են անհատի մասնագիտական զարգացման հիմնարար

հիմքերը, դրդապատճառների, հետաքրքրությունների, կարողությունների, բարոյական կողմնորոշումների, հարաբերությունների և վերաբերմունքի համալիր: Ձևավորվում են, որոնք հետագայում ձևավորում են արժեքային-մոտիվացիոն վերաբերմունք մասնագիտական գործունեության ընտրության ոլորտների նկատմամբ:

Առանձնացնենք մանկավարժի մասնագիտական կողմնորոշման աշխատանքի հետևյալ խնդիրները.

● Դպրոցականի հաջող ուսուցման, դաստարակության, անձի զարգացման, նրասոցիալականացման և մասնագիտական կայացման համար սոցիալ-մանկավարժական պայմանների ապահովում:

● Դպրոցականի ինքնակրթության, ինքնադաստիարակության, ինքնաիրացման, ապագա աշխատողների և մասնագետների ինքնագիտակցության ձևավորման հարցում օգնության ցուցաբերում:

● Դպրոցականի անհատական հետաքրքրությունների և պահանջմունքների զարգացում համապատասխան նրանց սոցիալական կայացմանը, բարոյականության, պատասխանատվության զարգացմանը:

Աշխատանք ավագ դրոցականների հետ.

Ախտորոշիչ գործունեություն.

● Սովորողների հետաքրքրությունների և հակումների բացահայտում և ուսումնասիրում

● Խառնվածքի և բնավորության ուսումնասիրում

● Ուսումնական գործունեության, վարքի, հաղորդակցման դրդապատճառների բացահայտում

● Վարքում, հաղորդակցման մեջ բացասական որակների և թերությունների բացահայտում

● Սովորողների դաստիարակվածության և զարգացման մակարդակի որոշում

● Սովորողների առողջական վիճակի ուսումնասիրում և հաշվի առնում

Խորհրդատվություն

● Մասնագիտական ախտորոշման հիման վրա սովորողներին մասնագիտական կողմնորոշման հարցում հատուկ օգնության ցուցաբերում

● Տեղեկատվական-ուղեցույցային խորհրդատվություն

3.Մասնագիտական տեղեկացում

● Աշխատանքի շուկայում իրադրության մասին պահանջված մասնագիտություններ, ոչպահանջարկ ունեցող մասնագիտացումներ

● Կրթության համակարգի, ընդունելության կանոնների, նախապատրաստական կուրսերի մասին տեղեկացում

● Ուսումնական հաստատությունների, ընդունելության կանոնների, նախորդ տարվա տվյալների(կոնկուրս, ռեյտինգ), ընթացող տարվա ընդունելության առանձնահատկությունների մասի տեղեկացում

4. Կազմակերպչական գործունեություն

● Մասնագիտական կողմնորոշման թեմատիկայով միջոցառումների կազմակերպում, «Մասնագիտական կողմնորոշման շաբաթ», «Մասնագիտական կողմնորոշման շաբաթ», զրույցներ էքսկուրսիաներ, հանդիպում տարբերմասնագիտության ներկայացուցիչների հետ

● Դպրոցականների խելամիտ ժամանցի կազմակերպում սպորտային և ստեղծագործականխմբակներ, դպրոցականների ստեղծագործական ընդունակությունների զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծում: Դպրոցականների հետ տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ձևերը.

● Մասնագիտական ինքնորոշման հարցով անհատական և խմբային կոնսուլտացիաներ

● Զրույցներ, դասաժամեր մասնագիտական կողմնորոշման թեմատիկայով

●Տարբեր մասնագիտության ներկայացուցիչների հետ հանդիպում

●Վարպետության մրցույթներ

● Էքսկուրսիաներ տարբեր ձեռնարկություններ և ուսումնական հաստատություններ

●Դպրոցականներին ներգրավվում օլիմպիադաներում, կոնֆերենցիաներում

● Դպրոցականներին ներգրավվում մասնագիտական կողմնորոշման աշխատանքում, ստենդների,պլակատների ձևավորում:Աշխատանքը ծնողների հետ. Ծնողները պետք է հասկանան մասնագիտական խորհրդատվության դերն ու նշանակությունը, անհրաժեշտությունը: Մասնագիտության ընտրության հարցում

հաճախ լինում է նաև, որ ծնողների և երեխաների կարծիքները չեն համընկնում: Երեխայի մասնագիտության ընտրության նկատմամբ ծնողների վերաբերմունքը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

-ընտանիքի դիրքորոշումը այս կամ այն մասնագիտության կամ աշխատանքային գործունեության նկատմամբ

-ընտանիքի սոցիալ-հոգեբանական, բարոյահոգեբանական մթնոլորտը, ներքին Հարաբերությունները,

-մանկավարժական և հատկապես մասնագիտական կողմնորոշման գծով գրագիտության մակարդակը:

Ծնողների և մանկավարժի համագործակցությունը ներառում է երկու ուղղություն՝ հոգեբանամանկավարժական լուսավորություն և ծնողների ներգրավում ուսումնադաստիարակչական պրոցես:

Հոգեբանամանկավարժական լուսավորությունը մասնագիտական կողմնորոշման շրջանակներում ենթադրում է ընտանիքի հետ աշխատանքի հետևյալ ձևերի կազմակերպում.

●Ծնողական ժողովներ, դասխոսություններ,կոնֆերենցիաներ

●Երեխաների մասնագիտական կողմնորոշման հարցերով թեմատիկ զրույցներ

●Տեղեկատվական-ուղեցույցային կոնսուլտացիաներ

Սրանցից ավանդական են ծնողական ժողովները, որոնց ընթաքում քննարկվում են հետևյալ թեմաները.

● Ընտանիքի դերը ավագ դպրոցականի մասնագիտական ինքնորոշման հարցում

● Մասնագիտական կրթության համակարգը

● Կրթության ստացման եղանակները

● Մասնագիտության ընտրության սխալները

● Մասնագիտական ընտրության ժամանակ առողջական վիճակի հաշվի առնում

● Աշխատանքի շուկան և մասնագիտական կրթության նրա պահանջները

Մասնագիտական կողմնորոշման սկզբունքներն այնպիսի պահանջներ են, որոնք ապահովում են նրա արդյունավետ իրագործումը: Դրանք միաժամանակ այնպիսի ելակետային պահանջներ են, որոնք դուրս են բերվել մասնագիտական կողմնորոշման օպտիմալ կազմակերպման օրինաչափությունից:

Աշխատանքը պետք է կառուցել ելնելով ոչ միայն կոնկրետ և լավ արդյունք ստանալու հանգամանքից, այլ նաև համամարդկային արժեքներից: Առանձնացնենք սկզբունքների հետևյալ խմբեր.

Ընդհանուր մանկավարժական սկզբունքներ:Մասնագիտական կողմորոշման կապը կյանքի, պրակտիկայի հետ ենթադրում է սովորողին օգնություն ցուցաբերել ապագա մասնագիտության ընտրության հարցում երկրի աշխատանքային շուկայի պահանջներին, գիտատեխնիկական առաջընթացի պայմաններին համապատասխան:

Հաջորդականություն և համակարգվածություն: Ենթադրվում է, որ մասնագիտական կողմնորոշման աշխատանքները անցկացվեն սկսած կրտսեր դպրոցական տարիքից, և հաջորդական ձևով՝ հաշվի առնելով փուլային կառուցվածքը:

Տարիքային առանձնահատկությունների հաշվի առնում:

Սա հնարավորություն է տալիսմասնագիտական ինքնորոշում իրականացնել աստիճանաբար,համապատասխան դպրոցականի տարիքին:

Դպրոցի, ընտանիքի, ուսումնական հաստատության միջև փոխադարձ կապի սկզբունք ենթադրում է մասնագիտական կողմնորոշման ժամանակ իրականացնել համագործակցված աշխատանք միմյանց փոխլրացնող կողմերի միջև:

Կոնկրետ մասնագիտական կողմնորոշման սկզբունքներ:

Մասնագիտական կողմնորոշման կոմպլեքսայնություն: Ենթադրում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքի կազմակերպումը սոցիալ-տնտեսական, հոգեֆիզիոլոգիական, մանկավարժական, հոգեբանական, բժշկական, իրավական ուղղություններով, ինչը հնարավորություն է տալիս պատանուն համակողմանիորեն նախապատրաստել մասնագիտության ընտրության համար:

Մասնագիտական ինքնորոշման ինքնուրույնության սկզբունք: Էությունը կայանում է հետևյալում.հետաքրքրություններն ու ընդունակություններն ի հայտ բերելուց հետո, համագործակցելով ընտանիքի,դպրոցի հետ, յուրաքանչյուրին խորհուրդ է տրվում իրեն համապատասխան մասնագիտություն:

Մանկավարժական ղեկավարումն ու վերահսկումը պետք է զբաղեցնեն իրենց տեղը, այնումենայնիվ մասնագիտության վերջնական ընտրություն կատարելու իրավունքը աշակերտինն է:

Մասնագիտական կողմանորոշման գիտակցվածության սկզբունք: Սա ենթադրում է մասնագիտության լավ իմացություն. ինչ պետք է իմանա և կատարի մարդն այդ մասնագիտության շրջանակներում, ինչպիսի պահանջներ են ներկայացվելու իրեն, ինչպիսին են աշխատանքի պայմանները, վարձատրությունը, զարգացման հեռանկարները, հնարավորության դեպքում փորձարկի իրեն այդ մասնագիտության ոլորտում:

Հասանելիություն: Անհրաժեշտ է հիմնական դպրոցականին խորապես ծանոթացնել մասնագիտությունների աշխարհին, մասնագիտության կողմից մարդուն ներկայացվող պահանջներին,մասնագիտության ձեռք բերման ուղիներին, մասնագիտական աճի հեռանկարներին, աշխատավարձի չափին, կենսական կենցաղային պայմաններին:

Գիտականությունը և հավաստիությունը: Ենթադրում է օբյեկտիվություն, մասնագիտական կրթությունը և աշխատանքը բնութագրող փաստերի, գնահատականների, թվերի հստակություն, ինչպես նաև մասնագիտության մեջ առկա դժվարությունների, վտանգների և ռիսկի մասին տեղեկացում:Դպրոցականի կողմից ինքն իրեն օբյեկտիվ գնահատելու սկզբունք: Իր հնարավորությունները որևէ մասնագիտության համար օբյեկտիվ գնահատելու համար պատանին պետք է ծանոթանա տվյալ մասնագիտության պրոֆեսիոգրամի հետ, որտեղ նշված են այն պահանջները, որը ներկայացնում է մասնագիտությունը մարդուն, նրա հոգեկանին, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին, առողջական վիճակին:

Մեթոդները: Մանկավարժը մասնագիտական կողմնորոշման գործունեությունը իրականացնում միշարք մեթոդներով:Դրանք են՝

Դիտում: Սա կատարվում է նախապես մշակված պլանով: Անձնավորությունը դիտվում է նրա գործունեության և շրջապատի հետ փոխհարաբերությունների շրջանակում: Դիտման օբյեկտը չպետք է զգա, որ դիտում են իրեն ինչն էլ կբացառի արհեստականությունը նրա վարքում և գործողություններում: Դիտման ընթացքում պետք է ուշադրություն դարձնել անձի, վարքի, գործողությունների, դատողությունների, արտահայտությունների վրա, այնուհետև վերլուծել այդ ամենը, եզրակացություն կազմել և կատարել եզրահանգումներ: Դիտման միջոցով հեշտությամբ կարելի է բացահայտել սովորողի ուսումնական և մասնագիտական հետաքրքրությունները, հակումները, կարողությունները,հմտությունները,բարոյական

արժեքները, բնավորությունը:Մեթոդը մեր խնդրի տեսակյունից արժեքավոր է այնքանով, որ հնարավորություն է տալիս պատկերացում կազմել սովորողների մասնագիտական մտադրության, հետաքրքրությունների,հակումների, ընդունակությունների մասին: Դիտումը պետք է անց կացնել դպրոցական գործունեության տարբեր պայմաններում՝ դաս, դասամիջոց, լաբորատորիա:

Զրույց: Պետք է անցկացնել նախապես մշակված պլանով, լինեն նախօրոք կազմված հարցեր: Մասնագիտական կողմնորոշման մասին զրույցը անց է կացվում աշակերտների, ծնողների և ուսուցիչների հետ: Զրույցի արդյունքում կարող է պարզվել աշակերտի հետաքրքրությունները, մասնագիտական մտադրությունները կենսական պլանները, դրանց հիմքում ընկած դրդապատճառները,մասնագիտության ընտրության հարցում դիրքորոշումները: Տարբեր հարցադրումների միջոցով անհրաժեշտ է պարզել ավագ դպրոցականը, հատկապես, որ ուսումնական առարկաներով է հետաքրքրվում, որոնք են նրա համար արժեքավոր, պետքական:Ծնողների հետ զրույցը լրացուցիչ ինֆորմացիա է տալիս աշակերտի մասին. ու՞մ է նմանակում,ո՞ր մասնագիտության մասին է հաճախակի խոսում, ինչպե՞ս է վերաբերվում ծնողների մասնագիտությանը և մտադիր է արդյո՞ք ընտրել այն:Առարկայական ուսուցիչների հետ մանկավարժի զրույցը ևս արդյունավետ է, որի ընթացքում ստացվում են բավականին տեղեկություն աշակերտի դրսևորումների, առաջադիմության, ակտիվության մասին:

Հարցում, անկետավորում: Անկետայում ներառված հարցերը պետք է լինեն հստակ ու հասկանալի: Այն անց է կացվում ոչ միայն աշակերտների, այլ նաև ծնողների հետ: Դպրոցականների ուսումնասիրման համար օգտագործվում են տարբեր անկետաներ՝ կախված հետազոտության փուլից,նպատակից, փորձարկվողի տարիքից և այլն: Օրինակ՝ սկզբնական շրջանում նպատակահարմար է կիրառել բաց տիպի անկետաներ:Հարցման ձև են հանդիսանում նաև գրավոր շարադրություններն ու վարժությունները:

Թեստ: Կան մասնագիտական պիտանելիության որոշման հատուկ թեստեր, որոնք պարզում են, թե անձը իր ընդունակություններով և առանձնահատկություններով որքանով է համապատասխանումտվյալ մասնագիտությանը: Թեստերի միջոցով անձի մոտ կարող ենք պարզել նաև այնպիսի առանձին որակների առկայությունը,

որը որպես պահանջ նրան է ներկայացնում կոնկրետ մասնագիտությունը կամ ընդհակառակը՝ մասնագետի մոտ այդ որակը չի խրախուսվում: Անկախ բնութագրերի հավաքագրման մեթոդ: Սա այն բնութագրերի հավաքագրման մեթոդն է, որը տրվում է միևնույն անձի մասին նրան ճանաչող անձանց (ծնողներ, մանկավարժներ, ընկերներ,բժիշկներ, մարժիչներ) կողմից և իրարից անկախ: Այնուհետև այդ ամենը համադրվում և վեր էլուծվում, դուրս է բերվում հակասությունները, կատարվում ընդհանրացումներ: Այս մեթոդի կիրառման ժամանակ սուբյեկտիվությունը նվազում է՝ կապված դպրոցականի հետաքրքրությունների, հակվածությունների, ընդունակությունների, այս կամ այն մասնագիտական գործունեության համար պիտանելիության գնահատման հետ:

Մանկավարժական էքսպերիմենտ: Անց է կացվում ինչպես առանձին աշակերտների, այնպես էլ ոչ մեծ թվով աշակերտների խմբի հետ: Լինում է բնական ուսումնական, դաստիարակչական պրոցեսի բնականոն պայմաններում և լաբորատոր հատուկ լաբորատորիաներում: Աշխարհում կան բազմաթիվ ու բազմազան մասնագիտություններ, որոնք տարածվում են մարդկային գործունեության ամենատարբեր բնագավառների վրա: Այդ բազմազանությունը հասարակության, գիտության, տեխնիկայի զարգացմանը զուգընթաց անընդհատ փոխվում է: Պարզ էդառնում, թե որքան կարևոր է մասնագիտության ճիշտ բնութագրումը, նրա էականառանձնահատությունների առանձնացումը, ինչը հնարավորություն է տալիս մասնագիտություն ընտրող մարդուն հասկանալ, թե որքանով է այն համապատասխանում իրեն:

Եզրակացություն

Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի ծրագիրը կնպաստի սովորողների մասնագիտության գիտակցված ընտրությանն ու ինքնազարգացմանը, կօգնի սովորողներին ուսումնասիրել իրենց հետաքրքրությունները, պլանավորել կարիերայի հետ կապված դրական փորձառությունները և գործողությունների նախագծման մեթոդի օգնությամբ յուրաքանչյուր տարիքային փուլին համապատասխան կատարել գիտակցված և նպատակային որոշում:

Մասնագիտական կողմնորոշման միջոցով հնարավոր կլինի նպաստել սովորողների դիրքորոշումների ձևավորմանը, սահմանել կարիերայիդժվարին, բայց իրագործելի նպատակներ, պատասխանատություն կրել սեփական որոշումների կայացման գործում և շարունակել աշխատաշուկայի մարտահրավերներին համապատասխան հմտությունների զարգացումը:

Մասնագիտական ճիշտ կողմնորոշման գործընթացում,մասնագիտության ճիշտ ընտրության համար անհրաժեշտ է հաշվի առնել ավագ դպրոցականների հոգեֆիզիոլոգիական և անհատական առանձնահատկությունները:

Վերջնարդյունքում, մասնագիտության ընտրությունը և կարիերայի պլանավորման գործընթացի մարտահրավերը կիրագործի ողջ կյանքի ընթացքում, կկարողանա արագորեն, նպատակային, գիտակցված ընտրել նոր մարտահրավերներ և շարժվել ժամանակին և իրավիճակին համապատասխան:

Գրականության ցանկ

1.Ն.Չախոյան, ²վագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրը ժամանակակից դպրոցումԵրևան, 2014թ.:

2.Ուսումնամեթոդական ձեռնարկ հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ծառայություններ իրականացնող մասնագետների համար:Եր.,Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն,2021թ.

3.Մասնագիտական կողմնորոշման նյութերի ժողովածու ուսուցիչների համար(8-12-րդ դասարաններ)-Երևան 2017թ.

4.Գևորգյան Հ., Մասնագիտական կողմնորոշման գործընթացի իրականացման տեխնոլոգիաները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, հեղինակային հրատարակություն,Երևան 2016թ.

-20-